Ի՞ՆՉ Է ԳԱՍՏՐՈԷՆՏԵՐԻՏԸ

Գաստրոէնտերիտը հաճախակի հանդիպող հիվանդություն է: Այն կարող է առաջանալ տարվա ցանկացած ժամանակահատվածում: Այն ավելի հաճախ պայմանավորված է աղիների վիրուսային վարակով: Հակաբիոտիկների օգտագործումն անիմաստ է, քանի որ դրանք չեն ազդում վիրուսների վրա:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԸՆԹԱՆՈՒՄ ԳԱՍՏՐՈԷՆՏԵՐԻՏԸ

Առաջանում են փսխումներ և լուծ: Բայց կարող են լինել նաև ընդհանուր «մրսածության» նշաններ՝ ջերմություն և հազ: Երեխաների մի մասը կարող է ունենալ տանջող որովայնացավ (որովայնային կոլիկաներ): Վիրուսները բազմանում են աղիներում և կղանքի հետ արտազատվում են: Եթե մի անգամ հաղթահարվում է այդ վարակը, առաջանում է իմուն պաշտպանություն այդ վիրուսների նկատմամբ: Այն սովորաբար տևում է մի քանի օր, բայց կարող է երկարաձգվել մի շաբաթ կամ նույնիսկ ավել:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ԲՈՒԺԵԼ ԳԱՍՏՐՈԷՆՏԵՐԻՏԸ

Ամենակարևոր հանգամանքը երեխայի բավարար չափով հեղուկներ խմելն է, քանի որ այն կանխում է ջրազրկման առաջացումը: Կրծքի հասակի երեխաներն այդ առումով ավելի վտանգված են:

- Հաճախակի տվեք երեխային քիչ քանակով՝ կում-կում կամ գդալ-գդալ, հեղուկներ, 5-10 րոպեն մեկ, նույնիսկ եթե երեխան փսխում է: Գրի առեք խմած հեղուկների քանակը:
- Եթե Ձեր երեխան դեռ կրծքով է կերակրվում, կերակրեք նրան ավելի հաճախակի: Դուք ինքներդ պետք է խմեք էլեկտրոլիտային լուծույթներ:
- Էլեկտրոլիտային լուծույթները, ինչպիսիք են Ռեհիդրոնը կամ Ռեհիդ Սուլյուշն (Rehyd solution) իդեալական են, քանի որ պարունակում են օրգանիզմին անհրաժեշտ բոլոր աղերը և շաքարները: Դրանք կարելի է ձեռք բերել առանց դեղատոմսի ցանկացած դեղատնից:

- Եթե Ձեր երեխան հրաժարվում է էլեկտրոլիտային լուծույթներից, կարող եք դրանք խառնել իրենց սիրելի ըմպելիքներին: Կարող եք խառնել նաև մրգային հյութերի հետ, կամ շաքարաջրով բացել (1:4 հարաբերությամբ): Կաթնային ըմպելիքներն իդեալական ընտրություն չեն, սակայն կարելի է տալ, եթե դրանք միակն են, որից Ձեր երեխան չի հրաժարվում: Այն կարելի է բացել ջրով (1:1 հարաբերությամբ):
- Երեխան կարող է չուտել, բայց կարող եք փորձել ձողիկներ, պաքսիմատ կամ բրինձ:
- Հակափսխեցուցիչ կամ սրտխառնոցի դեմ ազդող դեղորայքը ցուցված է միայն ծանր որովայնային կծկանքների կամ անզուսպ փսխումների դեպքում: Ցավոք այդ միջոցներն երեխաների դեպքում այդքան էլ արդյունավետ չեն: Փորլուծությունը դադարեցնող դեղորայքը՝ ինչպիսին է Իմոդիումը, հակացուցված է երեխաներին, այն կարող է երկարացնել ընթացքը և հանգեցնել աղիքային անանցանելիության:

Ե՞ՐԲ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

- Երբ երեխան բացարձակապես հրաժարվում է խմելուց կամ ի վիճակի չէ խմել
- Ջրազրկման նշանների առկայության դեպքում (լացելիս արտասուք չկա, 4-ից քիչ թաց տակդիր օրվա ընթացքում, կամ ավելի չոր, քան սովորաբար, խաղերից հրաժարում)
- Ոչ սովորական ախտանիշների դեպքում՝ բացառապես փսխումներ 2 օր և ավելի, կանաչ կամ արյունային փսխումների կամ արյունային լուծի դեպքում
- Երբ գաստրոէնտերիտը տևում է մի քանի օրից ավել, առանց լավացման նշանների, հատկապես կրծքի հասակի երեխաների շրջանում
- 3 ամսականից ցածր երեխաների շրջանում, մինչև կսկսեն ջերմել, կամ փսխումները և լուծը մի քանի ժամ կշարունակվեն
- Բոլոր այն դեպքերում, երբ Ձեր կարծիքով երեխայի վիճակի մեջ առկա է վատթարացում

ARABKIR
JOINT MEDICAL CENTRE
ԱՐԱԲԿԻՐ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
Mamikoninants str. 30, Yerevan, 375014 Armenia
Tel.: (374 1) 236 883, Fax: (374 1) 284 170, E-mail: aramc@arminco.com